

նականներն համար կատարեալ ուրախութեան տօն էր դարձել Հայրապետի հայրական այցելութեան պատճառով:

Դեկտ. 2-ին աշակերտական գրական երեկոյթ էր նշանակուած ձեմարանում Ս. Թադևոսի և Բարդուղիմէոս աստուծայնի տօնի պատճառով: Աստուծայնի ուսանողներէց երկուսը տօնին պատշաճ ծառեր խօսացին, իսկ փոքրներից մի քանիսը կրօնական բանաստեղծութիւններ էին արտասանում: Ս. Հայրապետը այս անգամ ևս հաճեց միարանական ուխտել ներկայ լինել հանդիսին և զանազան նկատողութիւններ արաւ աշակերտների արտասանութեան մասին: Հանդիսի վերջին Ն. Ս. Օծութիւնը օրհնեց ձեմարանի ուսուցչական խումբն ու աշակերտութիւնը:

Երկու շաբաթից ի վեր Մայր Աթոռում հիւր է «Բանասէր» ուսումնական թերթի հրատարակիչ և խմբագիր պ. Յ. Կ. Բասմաջեան: Պարոնը լուսանկար և Էսթաճաճ պատկերներ է հանում Մայր Աթոռում գտնուած՝ և Զուարթնոց եկեղեցու նորագիւտ սեպագիր արձանագրութեանց: Պ. Բասմաջեան հայագիտութեան տոկուն աշխատաւորներից մէկն է, չնայելով նորա նիւթական միջոցների սղութեան՝ ջանասիրութեամբ առաջ է տանում իւր գիտնական թերթը և այսուհետեւ յոյս ունի աւելի ծոխ և մատչելի դնով հրատարակելու: Յաջողութիւն ենք ցանկանում և մաղթում, որ նորա տաժանի գործը զնահատուի մեր բանասէր և բանիմաց հասարակութեան կողմից:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի.

«Մշակ»-ի № 229-ի մջ Տ. Յ. մի շատ գեղեցիկ միտք է յայտնում հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի կտակի առթիւ: Խորէն Ստեփանէ և Սարգիս Զալալեան եպիսկոպոսները իւրաքանչիւրը 25 հազարական բուրլի են կտակել այլ և այլ հաստատութիւնների անունով, երբ իրենց զբամբը 125 կամ 130 տարուց յետոյ կշահուի և մեծ գումարների կհասնի: Պ. յօդուածագիրը կտակողների կողմից անարդարութիւն է համարում այդ՝ ժամանակակից սերնդի դէմ:


Եթէ 25000 բուրլին շահ է բերելու հարիւր և աւելի տարիների ընթացքում, մի՞թէ այն բարի գործը, որ կարող էր կատարուել հէնց այժմ այդ 25000 բուրլով, շահ չէր բերելու հարիւր և աւելի տարիների ընթացքում: Մի՞թէ երբ գուր հնարաւորութիւն է, ք տալիս մի գիւղացու վերականգնել իր քայքայուած տնտեսութիւնը, մի ուսանողի շարունակել իր ուսումը, մի խեղճ կնոջ՝ չը ծախել իր պատիւը իր որբերին կերակրելու համար, մի հեղինակի՝ տպել իր գիրքը և այլն և այլն,—մի՞թէ, ասում ենք, դուք դրանով օգնում էք միայն այդ գիւղացուն, միայն այդ ուսանողին, այդ կնոջ, այդ հեղինակին, և ոչ թէ նրանց միջոցով նոյնպէս և նրանց շրջապատողներին և նրանց ապագայ սերունդներին: Դէ հաշուեցէք այժմ գործի այդ տոկոսը ու համեմատեցէք նրան փողի առկոսի հետ, և կըտեսնէք, որ գործի տոկոսը աւելի մեծ է:

Ահա միանգամայն համաձայն ենք Տ. Յ.-ի մտքերի հետ: Այդպիսի կտակների մեծագոյն մասը կորչում է և մենք շատ օրինակներ ունինք հէնց մեր կեանքից, այն ինչ կտակը ժամանակակիցների համար գործադրելով ոչ միայն կորուստից ազատ է, այլ և ինքնըստինքեան շահ, ինչպէս պ. յօդուածագրի վերոյ գրեալ խօսքերն են ցոյց տալիս:



Անցեալ համարում յայտնել էինք, որ Թիֆլիսի վանքի եկեղեցու ծխական պ. Գրիգոր Տ. Պետրոսեան ծխական մի խնդրի համար բացատրութիւն էր խնդրել: Ներկայ տարուայ Մշակի №№ 149 և 162 մէջ յարգելի պարոնը հակառական տեղեկութիւններ է կարգացել «անօրհնէք»-ի մասին. «մէկի մէջ առում էր, թէ ծխականների աներ օրհնէր—անօրհնէք կարելի է տարուայ ընթացքում միմայն երկու անգամ—Յնդեան և Չատիի տօներին—կատարել իսկ միւսի մէջ—թէ միշտ կարելի է»: Աւանց երկար բացատրութիւններին մէջ մանկու յայտնում ենք, որ Հայոց եկեղեցու նախնական սովորութեան համեմատ «անօրհնէք» կարելի է կատարել միայն տարին էրէն—անգամ, վերոյիշեալ տօներին: Հայոց եկեղեցու աւանդութիւններին ճանաչանք հակառակ է ամարանոցների մէջ մուտք դրածամ նոր սովորութիւնը, օրհնել ամարանոց եկողների աները: Այս սովորութիւնը յառաջ է եկել հաւանքէն մասամբ քահանաների շահանդուրութիւնից և մասամբ մեր ծխականների իրենց քահանաներին վարձարելու անփութութիւնից:

Տօնախմբաների համար նշանակուած քահանաների «անօրհնէք» մանդալը նոյնպէս հակառակ է Հայոց սովորութեան, որը պէտք է արդելու անպայման կերպով: Սակայն քահանաներին առանց վարձարութեան թողնել չի կարելի քանի որ նորա ապրում են սոփաբարտ տերւոնական յիշեալ երկու տօներին տուած նուէրներով: Արդէս զի այս խնդիրը աւելի հիմնադր կերպով ուսումնասիրենք և մեր կարծիքը յայտնենք խնդրում ենք պ. Գրիգոր Տ. Պետրոսեանցին և առ հասարակ Հայ սովորութիւնների հաւատարիմ և եկեղեցու սպասաւորների բարեկարգութեան բերեկամ ծխականներին՝ այս երեղծի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ տալ:



Նոյնմ. 14-ին հետագիրը գումեց, թէ Հայոց եկեղեցու նշանաւորադոյն սպասաւորներից մէկը՝ Խորէն եպիսկոպոս Ստեփանէ՝ 60 տարեկան հասակում Թիֆլիսում հանգեաւ ի Տէր կարճատե հիւանդութիւնից յետոյ: Տարաբաղդաբար նորա կենսագրութիւնը որ պատրաստել էինք ներկայ համարի համար մեզինք անկախ պատճառով հրատարակել չկարողացանք: Յոյս ունինք այդ ախուր պարտքը հետեւեալ համարում կատարել:

ՏԱԺԿԱՆՅԷ:

— Պանորմա-Պալլքէտերի Տեղապահ Դուբեան Թաթուլ վարդապետ պաշտօնէ հրաժարեցուեցաւ Խառն Ժողովոյ վերջին նիստին մէջ: Ինչպէս կը յիշուի, Դուբեան վարդապետ առիճ քանի մը ամիս առաջ Ազամ Ալթունեան անուն անձի մը կը կնամուծուածիւնը կատարած էր, և խնդիրը այն ատեն Կրօնական Ժողովոյ կողմէ քննուելով Խառն Ժողովոյ նկատողութեան յանձնուած էր: Անցեալ ուրբաթ օր ամուսնական խնդիրներու կարգին մէջ այս դործն ալ քննուեցաւ, և Խառն Ժողովը նկատելով որ այս խնդիրը Պանորմայի նախորդ տեղապահներու կողմէ տեղեկագրուած էր Պատրիարքարան, և յետ քննութեան մերժուած էր, և թէ Թաթուլ վարդապետ ինքնագրուել տնօրէնութեամբ կանոնական թերութիւն դործած է, որոշեց դադարեցնել զինքը տեղապահական պաշտօնէն, և այս ամուս-